# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 001-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԿ ՅԱԽՇԻԲԵԿԻ ՍԱՅԱԴՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող Հայկ Յախշիբեկի Սայադյանին համասեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության 0,08000 հա հողամասը (ծածկագիրը՝ 10-020-0052-0006, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) և բնակելի տունը վերահասցեավորել՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Ելփին 14-րդ փողոց, տուն 21՝ նախկինում տրված գ. Ելփին 24 փողոց, տուն 21 հասցեի փոխարեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 002-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՔՅԱՐԻԶ ԿՈՉՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՎԵՏԻՍ ՎԱՉԱԳԱՆԻ ԽՈՒԴՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արենի համայնքի ղեկավարը, քննության առնելով 10 հունվարի 2022 թվականի Արենի համայնքի ղեկավարի որոշմամբ հարուցված վարչական գործը, այն է՝ Արենի համայնքի Չիվա բնակավայրի Քյարիզ կոչվող տարածքում գտնվող, Ավետիս Վաչագանի Խուդոյանին սեփականության իրավունքով պատկանողհող ատարածքում ինքնակամ շինություն կառուցելու վերաբերյալ վարչական իրավախախտման հարցը՝ պարզեց որ.

Ավետիս Վաչաագանի Խուդոյանը (Հասցեն՝ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա Շերամի փողոց 81շ., բն.,13 անձնագիր՝ 006164636) Արենի համայնքի Չիվա բնակավայրի Քյարիզ կոչվող տարածքում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող տարածքում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, իրականացրել է ապօրինի շինություն, որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Արենիի համայնքապետարանի, Արենի համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շենքերին շինությունների, ապօրինի հողօգտագործումների հայտնաբերման, կանխարգելման և կասեցման կամ օրենքով սահմանված կարգով դրանց առաջացրած հետևանքների վերացման նպատակով մշտական հանձնաժողովի 09.11.2022թ. թիվ1 արձանագրության հիման վրա 2023թվական հունվարի 10-ին, Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, բ կետի նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Արենի համայնքապետարանի Արենի համայնքի տարածքում վարչական իրավախախտումներ հայտնաբերելու և պատասխանատու անձանց (սուբյեկտների) վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով ստեղծված հանձնաժողովը հրավիրել և անցկացրել է լսում 10 հունվարի 2023 թվականին Ավետիս Վաչագանի Խուդոյանի մասնակցությամբ:

**Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

1. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող շենք-շինությունների, ճանապարհների և փողոցների հերթական ուսումնասիրության ժամանակ Արենիի համայնքապետարանի, Արենի համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների, ապօրինիհողօգտագործումներիհայտնաբերման, կանխարգելման, կասեցման և օրինականացման, կամ օրենքով սահմանված կարգով դրանց առաջացրած հետևանքների վերացման նպատակով մշտական հանձնաժողովի կողմից Արենի համայնքի Չիվա բնակավայրի Քյարիզ կոչվող տարածքում գտնվող հողատարածքում հայտնաբերված ինքնակամ շինության կապակցությամբ 09.11.2022թ. թիվ 1 նիստի թիվ 1 արձանագրությունը:

2. Հանձնաժողովի 10.01.2023թ. նիստիթիվ 1 արձանագրությունը:

Հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, հաստատված եմ համարում հետևյալը՝

Ք. Երևան Մալաթի-Սեբաստիա Շերամի փողոց 81 շենքբնակարան 13-ի բնակիչ, Ավետիս Վաչագանի Խուդոյանի կողմից Արենի համայնքի Չիվա բնակավայրի Քյարիզ կոչվող տարածքում, իրեն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում, առանց համապատասխան թույլտվության, իրականացվել է ինքնակամ շինարարություն շինարարական աշխատանքներ, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, ուստի կարող ենք հաստատված համարել, որ քննարկվող շինությունը հանդիսանում է ինքնակամ կառույց:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով 2022 թվականի նոյեմբերի 9-ին, Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ԵՀՀ օրենքի 30-րդհոդվածի 1-ին մասի, բ կետի հիմքով, Արենիի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023թ. հունվարի 10-ին հրավիրվել է լսում, որին մանակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Ավետիս Վաչագանի Խուդոյանին:

**Վարչական ակտ ընդունելու հիմնավորումները.**

Համայնքի ղեկավարը օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասպանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև

կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀօրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, ակետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են՝ կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա.

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում: Շինարարության թույլտվությունը համայնքներում տալիս է համայնքի ղեկավարը Կառավարության սահմանած կարգով:

Տվյալ պարագայում Ավետիս Վաչագանի Խուդոյանը (Հասցեն՝ ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա Շերամի փ. 81շ., բն 13 անձնագիր՝ 006164636) Արենի համայնքի Չիվա բնակավայրի Քյարիզներ կոչվող տարածքում սեփականությա իրավունքով իրեն պատկանող տարածքում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի (շինարարության թույլտվության) իրականացրել է ապօրինի ինքնակամ կառույցի շինարարություն: Կատարված իրավախախտման մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներ չեն հայտնաբերվել:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝

Առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգ հարյուրապատի կից հազարապատիկի չափով:

Համաձայն նույն օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սույն հոդվածի 1-ին մասում նշված արարքները գյուղական բնակավայրերում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Տվյալ դեպքում հաշվի առնելով, որ սույն որոշման հացեատիրոջ կողմից կատարված իրավախախտումը կատարվել է Արենի համայնքի Չիվա բնակավայրի Քյարիզներ կոչվող տարածքում հետևաբար նաև գյուղական բնակավայրում, ուստի պատասխանատվության միջոց տուգանքը պետք է գանձվի՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին« ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 4-րդ հոդվածով 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասի» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ *որոշում եմ*

1. Ավետիս Վաչագանի Խուդոյանի նկատմամբ նշանակել տուգանք 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով՝ Արենի համայնքի Չիվա բնակավայրի Քյարիզ կոչվողտարածքում, իրեն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում ինքնակամ շինություն կառուցելու համար:

2. Սույն որոշմամբ նշանակված տուգանքի վճարման հաշվեհամարն է՝ 900355105082

3. Որոշման կատարման ընթացքին կատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Արենիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով դրա ուժի մեջմ տնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆԴԱՀԿ ծառայության միջոցով այն բողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափող անձանց վերաբերյալ տեղեկություններ հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից azdarar.am կայքին և/կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 003-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԱՄԱՅԻՍ ՆՈՐԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԵՎ ՌՈՒԶԱՆՆԱ ԱՂԱՍԻՆԻ ԲԱԲԱՅԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.491 ՀԱ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը, ՀՀ Վայոց ձոր մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի 21.12.2022թվականի թիվ 12 նիստի դրական եզրակացությունը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արամայիս Նորիկի Հակոբյանի և Ռուզաննա Աղասինի Բաբայանի համասեփականություն հանդիսացող 0.491հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0300-0329, հողատեսքը՝ պտղատու այգի) բարձրարժեք հողատեսքը փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահող՝ չփոխելով հողակադաստրային գնահատման խումբը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 004-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԱՎԻԹ ԱՇՈՏԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արենի համայնքի ղեկավարը, հիմք ընդունելով 13 դեկտեմբերի 2022 թվականի թիվ 1 արձանագրությամբ ձեռք բերված փաստական տվյալները, սեփական նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը, այն է՝ Արենի համայնքի Արենի բնակավայրի տարածքում գտնվող, Դավիթ Աշոտի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանողհող ատարածքում ինքնակամ շինություն կառուցելու վերաբերյալ վարչական իրավախախտման հարցը՝ պարզեց որ.

Դավիթ Աշոտի Սիմոնյանը (Հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ Արենի համայնք՝ Արենի բնակավայր 2փ., 20, անձնագիր՝ AR0314632) Արենի համայնքի Արենի բնակավայրի տարածքում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող 10-008-0184-0083 կադաստրային ծածկագրով հողամասում, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, իրականացրել է ապօրինի շինություն, որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Արենիի համայնքապետարանի «Արենի համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների, ապօրինի հողօգտագործումների հայտնաբերման, կանխարգելման և կասեցման կամ օրենքով սահմանված կարգով դրանց առաջացրած հետևանքների վերացման նպատակով մշտական հանձնաժողովի 13.12.2022թ. թիվ1 արձանագրության հիման վրա 2022 թվականի դետեմբերի 19-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի« բ կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Արենի համայնքը հրավիրել և

անցկացրելէլսումներ 26.12.2022թ-ին, որի մասին պատշաճ ծանուցվել է Դավիթ Սիմոնյանը և վերջինս մասնակցել է լսումներին:

**Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

1. Հանձնաժողովի 13.12.2022թ. նիստիթիվ 1 արձանագրությունը:

Հարուցված և իրականցված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, հաստատված եմ համարում հետևյալը՝

Հանձանաժողովի այցելության ընթացքում արձանագրվել է,որ տարածքում առկա են թվով 2 շինություն: Շինություններից մեկը, որը տեղադրված էր հենասյուներիվրա, գտնվումէրժայռիեզրին, իսկմյուսշինությունը, տեղադրված էր մոտ 18-20 մետր հեռավորության վրա վերոնշյալ շինությունից: Շինությունների ուսումնասիրությունից պարզվեց, որ հենասյուների վրա տեղադրված եռանկյունաձև կառույցը հանդիսանում է ոչ հիմնական շինություն (շարժական գույք), իսկ մյուս կառույցը, որի մի մասը հիմքերով ամրակցված էր հողամասին, իսկ մյուս մասը տեղադրված էր մետաղական հենասյուների վրա՝ հանդիսանում է հիմնական շինություն (անշարժ գույք): Դավիթ Սիմոնյանը հանձնաժողովին տեղեկացրել է, որ մի ժամանակ սկսել է որոշակի գործընթաց բայց այդպես էլ ավարտին չհասցնելով կիսատ է թողել գործը:

Հաշվի առնելով եղանակային անբարենպաստ պայմանները հանձնաժողովը որոշեց հետագա գործընթացները կազմակերպել համայնքապետարանում:

Համայնքապետարանում Ս.Ավագյանը, կատարած չափագրման տվյալները տեղադրելով համապատասխան ծրագրի մեջ ներկայացրեց, անշարժ գույքը կառուցված է Դավիթ Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող 10-008-0184-0083 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության ջրովի վարելահողի վրա: Նշված շինության կողքը կառուցված է նաև փայտե տախտակներից հարթակ, որի մի անկյունը նույնպես դուրս է իր սեփական հողամասից:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով 2022 թվականի դեկտեմբերի 19-ին« Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ կետի հիմքով, Արենիի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2022թ. դեկտեմբերի 26-ին հրավիրվել է լսում, որին մանակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է ԴավիթՍիմոնյանը:

Նշված վարչական վարույթի լսումներին ներկայացել է Դավիթ Սիմոնյանը: Հանձնաժողովի կողմից վերջինիս տեղեկացվել է քննվող հարցի էությունը, բացատրվել են նրա իրավունքներն ու պարտականությունները, տրամադրվեց

վարույթի նյութերը, որի վերաբերյալ Դավիթ Սիմոնյանը հայտնեց, որ իր դիրքորոշումը կներկայացնի նյութերին ծանոթանալուց հետո մինչև 13.01.2023թ-ը:

Հաշվի առնելով վերոգրյալը հանձնաժողովը որոշել է ամփոփել 26.12.2022թ-ին հրավիրված լսումների արդյունքերը և առաջնորդվելով պատշաճ վարչարարության սկզունքով, հնարավորություն տալ Դավիթ Սիմոնյանին ներկայացնելու գրավոր դիրքորոշում:

**Վարչական ակտ ընդունելու հիմնավորումները.**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են՝ կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա.

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում: Շինարարության թույլտվությունը համայնքներում տալիս է համայնքի ղեկավարը Կառավարության սահմանած կարգով:

Տվյալ դեպքում Դավիթ Սիմոնյանը (Հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ Արենի համայնք՝ Արենի բնակավայր 2փ., 20 անձնագիր AR0314632) Արենի համայնքի Արենի բնակավայրի տարածքում սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի

(շինարարության թույլտվության) իրականացրել է ապօրինի ինքնակամ կառույցի շինարարություն: Կատարված իրավախախտման մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքեր չեն հայտնաբերվել:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝

Առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգ հարյուրապատիկից հազարապատիկի չափով:

Համաձայն նույն օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սույն հոդվածի 1-ին մասում նշված արարքները գյուղական բնակավայրերում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Տվյալ դեպքում հաշվի առնելով, որ սույն որոշման հացեատիրոջ կողմից կատարված իրավախախտումը կատարվել է Արենի համայնքի Արենի բնակավայրի տարածքում, հետևաբար նաև գյուղական բնակավայրում, ուստի պատասխանատվության միջոց տուգանքը պետք է գանձվի՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀօրենսգրքի 154-րդհոդվածի2-րդ մասով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 4-րդ հոդվածով 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդհոդվածի 2-րդ մասի «ա» կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

1. Դավիթ Աշոտի Սիմոնյանի նկատմամբ նշանակել տուգանք 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով՝ Արենի համայնքի Արենի բնակավայրի, իրեն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում ինքնակամ շինություն կառուցելու համար:

2. Սույն որոշմամբ նշանակված տուգանքի վճարման հաշվեհամարն է՝ 900355105082

3. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Արենիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀԱՆԴԱՀԿ ծառայության միջոցով այն բողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափող անձանց վերաբերյալ տեղեկություններ հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 005-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՌՈՒԲԻԿ ԲԱԽՇԻՆԻ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքով և հիմք ընդունելով Ռուբիկ Բադալյանի դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Ճանաչել Ռուբիկ Բախշինի Բադալյանի սեփականության իրավունքը Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի 5-րդ փողոց, թիվ 4 հասցեում գտնվող բնակելի տան և օժանդակ կառույցների նկատմամբ:

2. Բնակելի տունը և Օժանդակ կառույցները կառուցվել են մինչև 2001 թվականը.

3. Անշարժ գույքը բավարարում է սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 006-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆԱՐԻՆԵ ԺՈՐԺԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.0571 ՀԱ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը, ՀՀ Վայոց ձոր մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի 04.01.2023թվականի թիվ 1 նիստի դրական եզրակացությունը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածում գտնվող, Նարինե Ժորժիկի Մկրտչյանի սեփականություն հանդիսացող 0.0571հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0254-0006, հողատեսքը՝ վարելահող) բարձրարժեք հողատեսքը փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ խոտհարք՝ չփոխելով հողակադաստրային գնահատման խումբը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 007-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱԼԻՍԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 5.0ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0.20440ՀԱ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը, ՀՀ Վայոց ձոր մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի 04.01.2023թվականի թիվ 1 նիստի դրական եզրակացությունը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածում գտնվող, Ալիսա Սերյոժայի Բարսեղյանի սեփականություն հանդիսացող 5.0հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0267-0001, հողատեսքը՝ վարելահող) հողամասից առանձնացված 0.20440հա բարձրարժեք հողատեսքը փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ խոտհարք՝ չփոխելով հողակադաստրային գնահատման խումբը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 008-Ա

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 033-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐԵՔՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՏՍԵՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՆԹԱԽՄԲԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ /ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-7/ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 13.08.2020 թվականի թիվ ՍՊ//23097-2020 հանձնարարականի պահանջները, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի ղեկավարի 2019թվականի փետրվարի 15-ի թիվ 033 որոշման հավելված երեքով հաստատված Արենիի համայքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների առաջին ենթախմբի (ծածկագիր՝ 3.1-7) պաշտոնի անձնագրում կատարել լրացում՝

Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի իրավունքները և պարտականությունները

1. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատու՝

1) պարտավոր է իր իրավասության շրջանակներում համգործակցել իրավասու մարմինների հետ, ապահովել ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների իրականացումը, հաշվետվությունների տրամադրումը, ինքնագնահատման զեկույցների կազմումը հարցաշարերի լրացումը, մասնակցությունը հակակոռուպցիոն ոլորտին առնչվող քննարկումներին,

2) պարտավոր է տրամադրել համապատասխան մարմնի գործառույթներին առնչվող ռազմավարական փաստաթղթերով նախատեսված՝ հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվություն, պարզաբանումներ, միջոցներ ձեռնարկել համապատասխան մարմնի կողմից ոլորտային միջազգային պարտավորությունների կատարման ապահովելու ուղղությամբ,

3) իրավունք ունի համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի շրջանակներում տվյալ մարմնի ստորաբաժանումներից պահանջելու և ստանալու տեղեկատվություն,

4) իրավունք ունի հակակոռուպցիոն քաղաքականության և մոնիտորինգի համար պատասխանատու մարմնից պահանջելու և ստանալու մեթոդական աջակցություն, խորհրդատվություն ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների վերաբերյալ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 009-Ա

### ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի պահանջներով, որոշում եմ՝

Սահմանել Արենիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների էթիկայի հանձնաժողովի ձևավորման, գործունեության կարգը և նրա գործառույթները համաձայն սույն որոշման հավելվածի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

*Հավելված*
*Արենի համայնքի ղեկավարի*
*2023թ. Հունվարի 18-ի 009-Ա որոշման*

# ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

## *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

1. Սույն կարգով կարգավորվում է Արենիի համայնքապետարանի (այսուհետ՝ համայնքապետարան) աշխատակազմի համայնքային ծառայողների էթիկայի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորման, գործունեության կարգը և նրա գործառույթները:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կարգով, Ջերմուկ համայնքի ղեկավարի (այսուհետ՝ Համայնքի ղեկավար) և ավագանու որոշումներով և այլ իրավական ակտերով:

3. Հանձնաժողովը բաղկացած է առնվազն 3 անդամից: Հանձնաժողովը ձևավորում և դրա անդամներին նշանակում է Համայնքի ղեկավարը:

4. Հանձնաժողովի որոշումները հիմք են համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողի նկատմամբ «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կարգապահական տույժ նշանակելու գործընթաց սկսելու համար:

5. Հանձնաժողովի գործունեության մասին տվյալները հրապարակվում են համայնքապետարանում: Հրապարակումները իրականացվում են դրանք փակցնելու միջոցով:

6. Հանձնաժողովի աշխատանքների նյութատեխնիկական և կազմակերպչական օժանդակությունն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմը:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Հանձնաժողովի հիմնական խնդիրն է նպաստել համայնքապետարանում էթիկայի կանոնների պահպանմանը:

8. Հանձնաժողովի նպատակն է ապահովել համայնքային ծառայողի պատշաճ վարքագիծը, բացառել հանրային և մասնավոր շահերի բախումը, ամրապնդել հասարակության վստահությունը:

9. Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակում՝

1) քննության է առնում իրեն ուղղված հարցերը.

2) քննարկվող հարցերի վերաբերյալ ընդունում է որոշումներ կամ տալիս եզրակացություններ.

3) իր գործունեության վերաբերյալ յուրաքանչյուր տարի գրավոր հաշվետվություն է ներկայացնում Համայնքի ղեկավարին.

4) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

10. Հանձնաժողովի քննարկմանը կարող են ներկայացվել Համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների էթիկայի կանոնների խախտման, դրանց պահպանման, պահպանմանը խոչընդոտելու վերաբերյալ հարցեր:

11. Սույն կարգի 10-րդ կետով նախատեսված հարցերը չպետք է առնչվեն քրեական, վարչական պատասխանատվություն առաջացնող հարցերին:

12. Հանձնաժողովի քննարկմանը հարցեր իրավասու են ներկայացնել՝

1) Համայնքի ղեկավարը.

2) Համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողները.

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք.

4) պետական լիազոր մարմինը:

13. Հանձնաժողովի քննարկմանը հարցերը ներկայացվում են գրավոր՝ համապատասխան հիմնավորումներով:

14. Հանձնաժողովը հարցերը քննարկում է դրանք ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում՝ Հանձնաժողովը հարցի քննարկումը՝ Հանձնաժողովի նախագահի որոշմամբ կարող է երկարաձգել, բայց ոչ ավելի, քան 7 աշխատանքային օրով:

15. Համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողները կարող են դիմել Հանձնաժողովին՝ պարզաբանումներ ստանալու էթիկայի կանոնների պահպանման վերաբերյալ: Հանձնաժողովը այդ դիմումներին պատասխանում է սույն կարգի 14-րդ կետում նշված ժամկետում:

16. Եթե Հանձնաժողովը սահմանված ժամկետում չի տալիս համապատասխան եզրակացություն կամ պարզաբանում, ապա Համայնքի ղեկավարը այն կարող է լուծարել և մեկամսյա ժամկետում ձևավորել նոր Հանձնաժողով, որն իր աշխատանքը սկսում է անպատասխան դիմումի քննարկումից: Այդ դեպքում սույն կարգի 14-րդ կետով սահմանված ժամկետները վերսկսվում են նոր Հանձնաժողովը ձևավորելու պահից:

17. Հանձաժողովի նիստերին մասնակցելու են հրավիրվում հարցը ներկայացրած անձը և այն անձը, ում հետ կապված է ներկայացված հարցի քննությունը:

18. Հանձնաժողովը հարցերի քննարկմանը կարող է ներգրավվել նաև շահագրգիռ անձանց, մասնագետների և այլոց:

19. Հանձնաժողովի նիստին սույն կարգի 17-րդ և 18-րդ կետերում նշված անձանց չներկայանալը արգելք չէ Հանձնաժողովի կողմից տվյալ հարցի քննության և համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունման համար:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

20. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

21. Հանձնաժողովի նիստերը գումարվում են համապատասխան դիմումի հիման վրա:

22. Հանձնաժողովը երեք աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է դիմումը, եթե այն ներկայացվել է սույն կարգով կամ այլ իրավական ակտերով չնախատեսված հարցերի վերաբերյալ:

23. Հանձնաժողովի նիստերը իրավազոր են՝ Հանձնաժողովի առնվազն կեսից ավելի անդամների մասնակցության դեպքում:

24. Հանձնաժողովի նախագահը դիմումը ստանալուց երեք աշխատաքային օրվա ընթացքում առաջարկում է այն անձին՝ ում վերաբերյալ դիմում է ներկայացվել էթիկայի կանոնների խախտումների վերաբերյալ՝ տալ համապատասխան բացատրություններ և պարզաբանումներ:

25. Հանձնաժողովը դիմում ներկայացրած անձին կարող է առաջարկել ներկայացնել անհրաժեշտ բացատրություններ, փաստաթղթեր և այլ հիմքեր, որոնք հնարավորություն կտան պարզել էթիկայի կանոնների խախտման առկայությունը կամ բացակայությունը:

26. Սույն կարգի 25-րդ կետում նշված փաստաթղթերը կամ պարզաբանում չներկայացնելը կարող է Հանձնաժողովի կողմից մեկնաբանվել, որպես էթիկայի կանոնների խախտման բացակայություն:

27. Հանձնաժողովի կազմից Համայնքի ղեկավարը նշանակում է Հանձնաժողովի նախագահ և քարտուղար:

28. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է Հանձնաժողովի աշխատանքները.

2) վարում է հանձնաժողովի նիստերը.

3) հաստատում է Հանձնաժողովի նիստի օրակարգը, որոշում նիստի անցկացման ժամանակը և վայրը.

4) որոշում է Հանձնաժողով ներկայացրած հարցերի քննարկման հերթականությունը.

5) ստորագրում է Հանձնաժողովի անունից կազմվող գրությունները.

6) Հանձնաժողովի անդամների միջև կատարում է աշխատանքի բաշխում.

7) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

29. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է Հանձնաժողովի աշխատանքների, նիստերի, օրակարգերի, անհրաժեշտ այլ նյութերի, ինչպես նաև եզրակացությունների և որոշումների նախագծերի պատրաստումը.

2) Հանձնաժողովի անդամներին, այն անձին, ում ներկայացմամբ քննարկվում է հարցը և ում հետ կապված է հարցի քննությունը, նիստից երկու աշխատանքային օր առաջ տեղեկացնում է Հանձնաժողովի նիստի օրակարգի, ժամանակի և վայրի մասին.

3) արձանագրում է Հանձնաժողովի նիստերը և ստորագրում արձանագրությունները.

4) կատարում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականները.

5) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

30. Հանձնաժողովի անդամը՝

1) Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում՝ նրա հանձնարարությամբ կատարում է վերջինիս լիազորությունները.

2) մասնակցում է Հանձնաժողովի նիստերին.

3) առաջարկություն է ներկայացնում Հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ.

4) ստորագրում է Հանձնաժողովի ընդունած որոշումները և եզրակացությունները,

5) կատարում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականները,

6) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

31. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվում են Համայնքի ղեկավարի որոշմամբ՝

1) անձնական դիմումի հիման վրա.

2) առնվազն երեք անգամ Հանձնաժողովի նիստերին անհարգելի բացակայելու դեպքում.

3) էթիկայի կանոնները խախտելու դեպքում.

4) սույն կարգով նախատեսված պահանջները խախտելու դեպքում.

5) Համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայող, համայնքի ավագանու անդամ այլևս չհանդիսանալու դեպքում:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

32. Հանձնաժողովը ընդունում է որոշում էթիկայի կանոնների խախտման կամ բացակայության մասին:

33. Էթիկայի կանոնների պահպանման մասով համայնքային ծառայողի կողմից անհրաժեշտ վարքագիծ դրսևորելու համար Հանձնաժողովը տրամադրում է եզրակացություններ:

34. Հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները ստորագրվում են Հանձնաժողովի նիստին ներկա բոլոր անդամների կողմից:

35. Հանձնաժողովի եզրակացությունները և որոշումները ընդունվում են քվեարկությամբ՝ Հանձաժողովի նիստին մասնակցած Հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Քվեարկությանը մասնակցում եմ Հանձնաժողովի բոլոր ներկա անդամները՝ քվեարկելով կողմ կամ դեմ:

36. Հանձնաժողովի որոշումները, դրանք ընդունելուց հետո, հաջորդ աշխատանքային օրը տրամադրվում են այն անձին, ում ներկայացմամբ քննարկվել է հարցը և ում հետ կապված է հարցի քննությունը, ինչպես նաև տվյալ համայնքային ծառայողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:

37. Հանձնաժողովը որոշման մեջ կարող է խորհրդակցական կարգով առաջարկել, թե ինչ կարգապահական տույժ նշանակվի տվյալ անձի նկատմամբ:

38. Հանձնաժողովի եզրակացությունները պարտադիր են Համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների համար:

39. Հանձնաժողովի եզրակացությունների հասանելիությունը Համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներին՝ ապահովում է Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

*Արենիի համայնքապետարանի*

*աշխատակազմի քարտուղար՝* *Գևորգ Սիմոնյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 010-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ***որոշում եմ***՝

1. Ստեղծել Արենի համայնքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների էթիկայի հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Գևորգ Սիմոնյան՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի նախագահ

2.Արմինե Սարգսյան՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, հանձնաժողովի քարտուղար

3. Արմենուհի Ծատուրյանյան՝ համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)

4. Միեր Ասատրյան՝ համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)

2. Հանձնաժողովին՝ գործունեությունը իրականացնել համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 18-ի «Արենիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների էթիկայի հանձնաժողովի ձևավորման, գործունեության կարգը և նրա գործառույթները սահմանելու մասին» N 009-Ա որոշմամբ սահմանված կարգով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 011-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.03976 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ 110ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆԱՎԱՐՏ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԱՐՇԱԿ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 22.12.2022 թվականի թիվ 158-Ա որոշումը, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.03976հա (ծածկագիրը՝ 10-008-0016-0018, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման, հասցեն՝ ՀՀ ՎՁՄ, Արենի համայնք, գ. Արենի 31-րդ փողոց թիվ 16) հողամասը և հողամասի վրա առկա 110քմ մակերեսով անավարտ բնակելի տունը ուղղակի վաճառքով օտարել կառուցապատող Արշակ Վաղարշակի Սամսոնյանին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 334-Ա

### ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՆՎԵՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է***՝

1. Ամանորի և Սուրբ ծննդյան տոներին ընդառաջ Արենի համայնքի գործարարների կողմից արցախյան պատերազմների հետևանքով զոհված և առաջին ու երկրորդ կարգի հաշմանդամություն ստացած զինծառայողների ընտանիքներին նվիրաբերված գինիների հետ տրամադրել նվերներ՝ շոկոլադե կոնֆետների հավաքածուի տեսքով, ընդամենը՝ 60 ընտանիք:

2. Յուրաքանչյուր փաթեթի արժեքի առավելագույն չափը սահմանել 1500 ՀՀ դրամ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 335-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 22.07.2022 թվականի թիվ 85-Ա, 20.09.2022թվականի թիվ 106-Ա և 22.12.2022թվականի թիվ 160-Ա որոշումները, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարել.

*Լոտ 1.* Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

1.1. 0.16034 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0110-0024, հողատեսքը՝ 3-րդ կարգի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ից ոչ պակաս՝ 380 000 ՀՀ դրամ:

1.2. 0.22285 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0184-0099, հողատեսքը՝ 5-րդ կարգի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ից ոչ պակաս՝ 220 000 ՀՀ դրամ:

*Լոտի ընդհանուր չափը՝ 0.38319հա, գումարը՝ 600 000 դրամ:*

*Լոտ 2.* Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող 1.92939 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0342-0011, հողատեսքը՝ 5-րդ կարգի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ից ոչ պակաս՝ 3 000 000 ՀՀ դրամ:

*Լոտ 3.* Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող 1.1043 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0343-0015, հողատեսքը՝ 5-րդ կարգի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ից ոչ պակաս՝ 2 000 000 << դրամ:

*Լոտ 4.* Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Չիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

4.1. 2.22392 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-036-0111-0226, հողատեսքը՝ 5-րդ կարգի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ից ոչ պակաս՝ 1 000 000 << դրամ:

4.2. 0.17671 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-036-0118-0004, հողատեսքը՝ 3-րդ կարգի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ից ոչ պակաս՝ 305 000 << դրամ:

*Լոտի ընդհանուր չափը՝ 2.40063հա, գումարը՝ 1 305 000 դրամ:*

*Լոտ 5.* Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

5.1. 0.5079 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-025-0111-0102, հողատեսքը՝ այլ հողատեսք) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ից ոչ պակաս՝ 220 000 << դրամ:

5.2. 0.506 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-025-0111-0103, հողատեսքը՝ այլ հողատեսք) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ից ոչ պակաս՝ 220 000 << դրամ:

5.3. 0.16350 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-025-0111-, հողատեսքը՝ այլ հողատեսք) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ից ոչ պակաս՝ 80 000 << դրամ:

5.4. 0.385 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-025-0107-0327, հողատեսքը՝ 5-րդ կարգի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ից ոչ պակաս՝ 192 020 << դրամ:

*Լոտի ընդհանուր չափը՝ 1.5624հա, գումարը՝ 712 020 դրամ:*

*Լոտ 6.* Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.15 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-025-0101-0387, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը, հասցե՝ գ.Խաչիկ 29-րդ փողոց 1, աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ից ոչ պակաս՝ 150 000 << դրամ:

*Լոտ 7.* Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.15 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-025-0101-0388, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը, հասցե՝ գ.Խաչիկ 29-րդ փողոց 4, աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ից ոչ պակաս՝ 150 000 << դրամ:

*Լոտ 8.* Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.15 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-025-0107-0318, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը, հասցե՝ գ.Խաչիկ 27-րդ փողոց 1, աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ից ոչ պակաս՝ 150 000 << դրամ:

*Լոտ 9.* Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.15 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-025-0107-0319, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը, հասցե՝ գ.Խաչիկ 27-րդ փողոց 3, աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ից ոչ պակաս՝ 150 000 << դրամ:

*Լոտ 10.* Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.15 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-025-0107-0320, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը, հասցե՝ գ.Խաչիկ 27-րդ փողոց 5, աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ից ոչ պակաս՝ 150 000 << դրամ:

*Լոտ 11.* Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.15 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-025-0107-0321, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը, հասցե՝ գ.Խաչիկ 27-րդ փողոց 7, աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ից ոչ պակաս՝ 150 000 << դրամ:

*Լոտ 12.* Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.15 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-025-0107-0315, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը, հասցե՝ գ.Խաչիկ 27-րդ փողոց 8, աճուրդով օտարել:

Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ից ոչ պակաս՝ 150 000 ՀՀ դրամ:

*Լոտ 13.* Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.15 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-025-0107-0314, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը, հասցե՝ գ.Խաչիկ 27-րդ փողոց 10, աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ից ոչ պակաս՝ 150 000 ՀՀ դրամ:

*Լոտ 14.* Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.15 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-025-0107-0312, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը, հասցե՝ գ.Խաչիկ 26-րդ փողոց 7, աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ից ոչ պակաս՝ 150 000 ՀՀ դրամ:

*Լոտ 15.* Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.15 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-025-0107-0313, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը, հասցե՝ գ.Խաչիկ 26-րդ փողոց 9, աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ից ոչ պակաս՝ 150 000 ՀՀ դրամ:

2. Արենիի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Սմբատ Սարգսյանին՝ Լոտ 6-ից 15-ով օտարվող հողամասերի համար նախապատրաստել և ներկայացնել ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագծերը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**